

Գօրի, 16 հոկտեմբերի

Ուրբաթ, հոկտ. 11-ին, տեղիս պետական տղայոց գիմնազիայում, դասերը վերջանալուց յետոյ, հայոց լեզուի ուսուցիչ Գր. Սիթարեանցը, ներկայութեամբ գիմնազիայի դիրեկտօրի և միւս հայ ուսուցիչների, հաւաքելով ըստ հայ աշակերտներին, բացատրեց հայկական տառերի գիւտի 1500-ամեայ և հայ տպագրութեան 400-ամեայ տօնի նշանակութիւնը: Նոյնը արվել է և տեղիս հայոց ծխ. դպրոցում:

Շաբաթ, հոկտ. 12-ին, տեղիս մայր եկեղեցում, համաձայն թեմ. առաջնորդի նախապէս տահանած ծրագրի, պատարագին ներկայ էին հայոց դպրոցի աշ. աշակերտուհիները իրանց մանկավարժական կազմով, պետական գիմնազիաների հայ աշ. աշակերտուհիները և խուոն երկսեռ բազմութիւն: Պատարագը վերջանալուց յետոյ տեղիս գործակալ քահանան յայտնեց հասարակութեանը, որ հոգեհանգիստը և կաթողիկոսական մաղթանքը կը կատարվեն հետևեալ օրը, կիրակի:

Եւ իրաւ, կիրակի, հոկտ. 13-ին, կատարվեց հանգիստը պատարագ, որի ժամանակ երգում էր հայոց դպրոցի երգեցիկ խումբը: Պատարագից յետոյ հ. գործակալի

հրամանով նախ մէջտեղ դրեցին սև դի-
սեղանը, կատարեցին հոգեհանգիստը և ապա
կաթողիկոսական մաղթանքը:

Ապա ներկայ եղող երկսեռ հասարակու-
թիւնը գիմեց դէպի հայոց դպրոցը, որտեղ
մանկավարժական կազմի նախաձեռնու-
թեամբ կազմակերպված էր շքեղ ցերեկոյթ:

Դպրոցի մեծ սրահը զարդարված էր ծա-
ղիկներով և գորգերով, սրահի ճակատին
բազմած էին կայսրի և կաթողիկոսի պատ-
կերները. հանդէսը բացվեց «Հայր մերով»,
որը դպրոցի աշակերտուհիները երգեցին
շատ գեղեցիկ: Ապա վարժուհի Ն. Ամիրջա-
նեանը մանրամասն բացատրեց հասարա-
կութեանը յօրելեանի նշանակութիւնը, ա-
նելով տառերի գիւտի և տպագրութեան
պատմութիւնները: Դպրոցի աշակերտուհի-
ները նոյն վարժուհու ղեկավարութեամբ
երգեցին խմբովին երգեր, արտասանեցին
ոտանաւորներ և պարեցին հայկական պա-
րեր: Հասարակութեան ուրախութեանը չափ-
ու սահման չը կար:

Ցերեկոյթը վերջացաւ ժամը 3-ի մօտ:
Հասարակութիւնը շնորհակալութիւն յայտ-
նելով մանկավարժական կազմին՝ ուրախ
սրտով հեռացաւ դպրոցից:

Մեսրոպ Մարութեան

II

Արասթուման, 15 հոկտեմբերի

Մեր ծխատէր Տ. ք. Տօնականեանի հրա-
ւիրանօք ամսիս 7-ին կայացաւ խորհրդ-
դակցութիւն հայ գրի 1500-ամեայ և հայ
տպագրութեան 400-ամեայ յօրելեանական
տօների առիթով: Ժողովը ընտրեց մի մար-
մին, բազկացած՝ հ. Տօնականեանից, Յ.
Քէշիշեանից և Ս. Դիլանեանից, և նրան
յանձնեց տօնի կատարման մասին հոգալ:

Հ. Տօնականեանի ջանքերով՝ կարելի ե-
ղաւ կարճ ժամանակի ընթացքում պատ-
րաստել աշակերտական մի գեղեցիկ ցերե-
կոյթ՝ յօրելեանական տօնին նուիրված, որը
մեծ բաւականութիւն պատճառեց թէ աշա-
կերտութեանը և թէ հասակաւորներին:

Հանդէսը կատարվեց շաբաթ, ամսիս 12-ին,
ժամը 12-ին: Երգվեցին մի քանի երկձայն
երգեր և արտասանվեցին ոտանաւորներ:
Հանդէսի առաջին մասը զուտ տօնական
բնաւորութիւն ունէր և սկսվեց թարգ-
մանչաց շարականով, իսկ երկրորդ մասը՝
երգերով ու մանկական ոտանաւոր-
խաղե-
րով:

Ներկայ էր պետ. դպրոցի ամբողջ աշա-
կերտութիւնը, որը երկրորդ դասից յետոյ
արձակված էր՝ ընտրված մարմնի խնդիրքի
համաձայն: Հ. Տօնականեանը բացատրեց
երեխաներին հասկանալի լեզուով՝ յօրելեա-
նական տօնը և նրա նշանակութիւնը. իսկ
օր. Տէր-Սամուէլեանը պատկեց ս. Սահակի
և ս. Մեսրոպի կեանքը:

Ամսիս 13-ին բաւական մեծ բազմութիւն
էր հաւաքված պատարագին. ծխատէր քա-
հանան պատարագի «Հայր-մերից» առաջ
բացատրեց հայ գրի և տպագրութեան նշա-
նակութիւնը և կատարած դերը հայ կեան-
քում:

Պատարագից յետոյ կատարվեց հայրա-
պետական մաղթանք և հոգեհանգիստ գրա-
կան ասպարէզում գործող բոլոր հանգու-
ցեալներին համար:

Հանդէսը վերջացաւ ժամը 1-ին:

Շնորհաւորական հեռագիր ուղարկվեց
Վեհափառ կաթողիկոսի անունով տեղիս հայ
հասարակութեան կողմից:

Սրբազան առաջնորդի ուղարկած բաժա-

նորդաթերթն էլ՝ յօգուտ դպրոցական ֆոն-
դի՝ որոշվեց շրջեցնել և նուիրատուութիւն
հաւաքել, չը նայելով որ օգոստ. 18-ին նոյն
նպատակով այստեղ հաւաքվեց 187 թ. և ուր
հարկն էր ուղարկվեց: Այս վերջին թերթով
էլ հաւաքվել է մօտ 20 թ.:

Տիգ. Մէտէնճեան

III

Մօսկվա, 13 հօկտեմբերի

Անհուն դոհունակութեամբ հեռացանք ե-
րէկ Լազարեան ճեմարանի սրահից, ուր
տօնվեց հայ աղգի նշանակալից օրը մի
փառահեղ երեկոյթով, որին ներկայ էին
գիմնադրական մասի աշակերտութիւնը՝ ու-
սուցիչներով, լսարանների ուսանողները
պաշտօնական համադրեստով, պրօֆէսօրա-
կան կազմը և 250 առանձին պատուաւոր
հրաւիրատուներով հրաւիրված հիւրեր:

Այդ օրը թէ դպրոցում և թէ լսարան-
ներում պարապմունքներ չը կային:

Հանդէսը բացվեց Եկմալեանի «Հայր մե-
րով», որ երգում էր հայոց եկեղեցու քա-
ռածայն խումբը Ե. Բաղդասարեանի ղեկա-
վարութեամբ: Ապա այդ խորհրդաւոր հան-
դիսաւոր աղօթքից յետոյ ճեմարանի վե-
րատեսուչ պրօֆ. Պ. Գիդուլեանով բուն և
երկարատև ծափահարութիւնների տակ կար-
դաց ճեմարանի և հանդիսին ներկայ եղող-
ների կողմից շնորհաւորական ընդարձակ
հեռագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսի ա-
նուամբ:

Դպրոցի օրկէստրի նուագած կայսերա-
կան օրհներգից յետոյ, դպրոցի տեսուչ Կ.
Կոստանեանց խօսեց հայոց գրերի մասին
նախ քան Մեսրոպ: Պիտի խօսէր և պրօֆ.
Ա. Կրիմսկի, բայց նա տկար էր. սպա Ա.
Թումանեան կարդաց իր ընդարձակ զեկու-
ցումը ս. Մեսրոպի կեանքի մասին, որը ևս
ընդունվեց բուն ծափահարութեամբ:

Խոր ազգեցութիւն թողեց Ե. Բաղդասարեանի «Սիրուն գարունը», որ երգում էր
պ. Յունանեան հեղինակի դաշնամուրի ներ-
դաշնակութեամբ: Ոգևորութեամբ ընդուն-
վեց նուագախմբի «Армянскій маршъ»-ը,
որից յետոյ եղաւ ընդմիջում:

Ապա հայերէն լեզուով խօսեցին ս. Գրքի
թարգմանութեան մասին Յուսիկ վ. Զոհ-
րաբեան և ս. Սահակի աշակերտների մա-
սին՝ հայոց լեզուի ուսուցիչ Բ.-Յովհաննի-
սեան: Ուսանող Յ. Մելիք-Օհանջանեան կար-
դաց իր ընդարձակ զեկուցումը տպագրու-
թեան մասին, իսկ ուսանող Պ. Սօրօկին
(ոուս) հայերէն կարդաց հայկական գրերի
մասին այլաբանութիւն ոուսերէն մեկնու-
թեամբ, որ ընդունվեց մեծ հետաքրքրու-
թեամբ:

Խմբի երգած Մ. Եկմալեանի «Տէր կեցո՛,
դու զՀայս» (solo օր. Ս. Ալլահվերդեան) և
«Ով դու բարեկամ»-ին հետեւեց դպրոցի ա-
շակերտութեան արտասանած ոտանաւոր-
ների (զուտ հայերէն) բաժինը և առանձին
solo նուագողները:

Հանդէսը վերջացաւ նոյն հայկական մար-
շով, որ պահանջեց նուագել հասարակու-
թիւնը:

Այսպիսով 4 ժամ հայկական միջավայ-
րում, բազմաթիւ ուսուցիչի հետ անց կաց-
նելով, ներկայ եղողները շնորհակալութիւն
յայտնեցին պրօֆ. Գիդուլեանովին և ուրախ
տրամադրութեամբ հեռացան Լազարեան
ճեմարանից:

Ըստ ասութեան ճեմարանի նախկին տես-
չի, սա միակ տօնախմբութիւնն է, որ ի
մի է ժողովել թէ ճեմարանի աշակերտու-

թիւնը և թէ լսարանի ուսանողութիւնը Մի հանդէս, ուր հայ թէ ուս հանդիսականները միահամուռ զգացված էին տանջված ազգի պատկառելի ծեր գրականութեամբ:

Այդ ամենից յետոյ՝ տեսուչ Կոստանեանցը ցուցադրել էր մի պատկառելի կօլլեկցիա հին ձեռագիրների և տպագրած գրքերի, որոնցով այնքան հարուստ է թէ իր՝ Կոստանեանցի և թէ լսարանների հսկայական գրադարանը: Էսպէթ

Մօսկվայից մեզ տեղեկացնում են, որ այնտեղ, Գրական-Ֆեդարուեստական Խըմբակցութեան զահլիճում, կիրակի, ամսիս 13-ին, ի պատիւ հայ տառերի գիւտի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի կայացել է գր.-երաժշտական երեկոյթ, որ նախաձեռնել է երաժշտագէտ Ն. Բաղդասարեան:

Հանդէսը, որ սկսվել է եր. ժ. 8¹/₂-ին, բաղկացած է եղել երկու բաժնից:

Առաջին բաժնում տեղի է ունեցել Ար. ս. Սիմէօնեանի մի բանախօսութիւնը՝ նուիրված տառերի գիւտին. ապա օր. Ս. Ալլահվերդեան երգել է «Տէր, կեցո՛ դու զՀայս»: Դրանից յետոյ Կ. Միքայէլեանը կարդացել է իր՝ «Չմբան երեկոյ» պատմուածքը, որին հետևել է Ն. Բաղդասարեանի «Մի լար, բըլբուլ» երաժշտ. հեղինակութիւնը, որ ջութակի վրա նուագել է Ն. Զակիեան: Այնուհետև Յ. Թաղէսեան խօսել է՝ թե՛ մա ունենալով «400-ամեակ տպագրութեան»: Դրան հետևել է Ն. Բաղդասարեանի երաժշտ. հեղ. «Անուշ» օպերայից խմբի երգած «Աղջիկ բաղդաւորը»:

Երկրորդ բաժինը, որ սկսվել է թեթև ընդմիջումից յետոյ, բաղկացած է եղել հետևալ նօթերներից: Նախ Մեսնիկեանը խօսել է՝ նիւթ ունենալով «Երկու կուլտուրական տօն»: Այդ բանախօսութեանը հետևել է Ն. Բաղդասարեանի երաժշտ. հեղ. «Ա՛խ ալ վարդ» բօմանսը, որ երգել է օր. Ակսայցեան: Ապա Մ. Տէր-Սարգսեան արել է նկարագրութիւնը ամենահին ձեռագիր Աւետարանի: Դրանից յետոյ օր. Ն. Կարապաշեան զաշնամուրի վրա նուագել է Բրամսի «Համերգային վալսերը», որին հետևել է տ. Վ. Մելիքեանի արտասանած «Մայրենի լեզուն» (թարգմ. Ս. Նազարեանի): Ապա Ս. Ալլահվերդեան երգել է «Լոց, ամպերը»: Ի վերջոյ Ալ. Ծատուրեան արտասանել է իր մի քանի բանաստեղծութիւնները, և ապա խումբը երգել է Կարա-Մուրզայի ներդաշնակած «Որ վառեցերը»:

Բոլոր երաժշտական կտորների կատարմանը նուագակցել է զաշնամուրի վրա՝ օր. Ն. Խաչիկեան:

Երեկոյթը հանդիսականների վրա շատ լաւ տպաւորութիւն է թողել:

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՅՕԳՈՒՏ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՅՆԴԻ

Արմաւիր, 10 հոկտեմբերի
Ինչպէս գրել էի, յօգուտ գալրոցական ֆօնդի հանգանակութեան Արմաւիր էր եկել Միխիթար եպիսկոպոսը:

Սրբազանը ժողովի հրաւիրեց տեղիս աչքի ընկնող հարուստներին, որից յետոյ սկսվեց ժողովարարութիւնը, որը դեռ ևս շարունակվում է:

Ժողովարարութեան մասնակցում էին գործակալ Գ. ք. Թուելեան, տանուտէր և հո-